

пережитые во время войны тяжелые дни арцахцев, решающая борьба против азербайджанского ига во имя свободы Арцаха и воссоединение армянского народа.

В статье особое место занимают анализы поэм «Храм Бога», «Месроп Маштоц в Амарасе», а также сборник стихов « Сосе ».

Отмечается, что В.Акопяну удалось в своеобразном художественном стиле изобразить арцахскую войну, создать яркий образ армянского героя-освободителя.

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵԼԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1-2 (23-24) 2011

ՀՏԴ 82.09

Գրականագիտություն

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԻՖԱՍՏԵՂՇՈՒՄԸ

Ն.Ս. Մնացականյան

Գրականությունը սերտորեն կապված է ժողովրդի կյանքի հետ և, ըստ այդմ, յուրաքանչյուր ժողովրդի գրականություն արտացոլում է տվյալ ժողովրդի պատմության և հոգեբանության յուրահատուկ կողմերը:

Ինչպես ամեն մի խոշոր գեղագետ, Վրթանես Փափագյանը նույնպես իր բացառիկ տաղանդով արտացոլել է բարդ ու հակասական իրադարձություններ և սուր բեկումներ:

Արիստոտելը ժամանակին գրել է, որ որ գեղարվեստական ստեղծագործության ակունքն իրականությունն է, որից նյութ է քաղում արվեստագետը:

Վրթ. Փափագյանը ևս իր գործերում ներկայացրել է իրական կյանքը՝ պատկերելով սուրբանական Թուրքիայում տիրող դատաբնական վայրենի բարքերը, քննչական պրոցեսի զագրելի բնույթը, ընդգծել, որ «Արդարություն» կոչվածը գոյություն չունի Թուրքիայում, այն «կորսված» էր:

Փափագյանը, խարազանելով օսմանիզմը, միաժամանակ քննադատել է ազգային հրեշներին: Նա գրել է. «Վատը՝ վատ է, թեկուզ նա հայ լինի, հրեշը՝ հրեշ է, թեկուզ նա մեր ազգակից եղած լինի... Կռվել թուրքի, քուրդի բռնակալ պաշտոնյաների, հայ մատնիչի և հրեշի դեմ»¹: Սա էլ եղել է նրա նշանաբանը:

Ծանր էր Թուրքիայի լծի տակ տառապող արևմտահայերի վիճակը:

Գյուղերը հիմնականում պատկանում էին բեկերին և կազմում էին նրանց սեփականությունը: Գյուղացիները հլու-հնազանդ կատարում էին բեկի և նրա ծառա՝ գյուղապետի քմահաճությունները:

Գյուղապետի և հարուստների վճիռը վավերացնում կամ փոփոխում էր բեկը, որը, կաշառելով իշխանավորներին, իրավունք ուներ պատժելու բնակիչներին, որոնք ստիպված էին գրկանքներին դիմանալ: Ողջ սեփականությունը պաշտոնապես պատկանում էր բեկին, որն ամեն բոլոր կարող էր նրանց դուրս վռնել իր հողերից և թողնել մերկ ու քաղցած...

Իր հողվածներից մեկում Վրթ. Փափագյանն այսպես է գրել դատի մասին. «Մի որևէ դատ, եթե չէ վճռում գյուղապետի նախագահությամբ կազմված համփաների ժողովը, դիմում են բեկին, հետո առաջնորդին և վերջապես տեղական կառավարությանը: Այդ վերջին դիմումը այժմ ավելի հաճախ է: Այժմ գյուղացին կարծելով, թե գյուղական վարչությունը կամ հայ դատաստանական ժողովը սխալ են վճռում, դեգերում է քաղաքական դատաստանները... և վայ այն գյուղացուն, որը մի անգամ ոտ կկոխե այդ տեղերը... հրաշքի նման երևույթ են համարում այն, եթե մի գյուղացի անվնաս դուրս պրծնի այդ դատարանից»²:

Թուրքահայաստանի յուրաքանչյուր գյուղ ազատ չէր թաշիրի, աշարի, դամջուրի, ինթիզաբի, պսակի և այն բոլոր տուրքերից, որոնք ընդհանուր անունով կոչվում են բահրա: Խնդր գյուղացին ամբողջ տարին քրտնաջան աշխատանքով դիզում էր իր բերքը, բայց նրանից գանձվող հարկերի պատճառով գյուղացուն անգամ ձմեռվա պաշար չէր մնում:

Հարկահանները գյուղացիներից հարկ էին գանձում ամենաստոր միջոցներով. «Հարկահանը «զափթին»-ներով գյուղն էր մտնում, ուտում էր, խմում, թափում, կոտրում, հետո հավաքում էր հարկը, թեկուզ այդ տարին գյուղացին և ոչ մի իսկ տավար ունեցած կամ ցորեն քաղած լինի: Վերջին ունեցածներն առնում էր. եթե հակառակում էին, ծեծել էր տալիս ժողովում,

քաղաք տանում, բանտի մեջ օրերով փակեցնում, և կամ տանում ձգում էր վաշխառուների ճանկը, ուր խնդճ գյուղացին գրավ էր դնում հողերը և, գոհացնելով հարկահանին, տրտում, տխուր վերադառնում էր գյուղ»³:

Փափագյանը նկարագրել է ամեն կողմից ճնշվող, հալածվող, ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև կանգնած հայ գյուղացու սոսկալի ողբերգությունը:

Անարդարությունների վառ նկարագիրն ենք տեսնում հայկական ժողովրդական հեքիաթներում: «Արդար դատավոր» հեքիաթում պատմվում է, թե ինչպես երկու երեխա կռվում են, մեկը զարկում է մյուսի գլխին ու վնասում այն: Գործը հասնում է դատարան: Դատավորը մեղադրում է զարկողի ծնողը, իսկ երբ վերջինս մի քանի ոսկի է ցույց տալիս դատավորին ու ասում. «Էս ոսկին վկա, դատավոր, ուր յանկաջ քաշեր իմ, էլ հմալ բան չենեմ»⁴, դատավորն ասում է. «Աղեկ, կոտրեր է, կոտրեր է, վնաս շատ մեծ չէ, խայ հմալ երեք, օր շուտ աղեկնա, ու մեկ լե չընկնաս դատարան»⁵:

Ժողովրդական հեքիաթի օրինակով Վրթ. Փափագյանը գրել է «Արդար դատաստան» պատմվածքը, որտեղ պատկերել է Պոլսի գլխավոր ատյանը, որը կոչվում էր «արդարադատության ատյան»:

Այսպես, գրողը պատմում է, թե ինչպես մի դատի ժամանակ դատավորի առաջ վեճի էին բռնվել երկու անձինք: Նախագահը լուտանք էր թափում սեղանի մոտ կանգնած երկու անձերից մեկի գլխին: Վերջինս երգվում էր, որ ինքը մեղավոր չէ և ցույց է տալիս ճակատի վրա բացված լայն վերքը: Դեպքը տեղի էր ունեցել այսպես. մի թուրք մտել էր մի հայ խոհարարի խանութ և սուպ էր ուզում: Հայը տալիս է նրան, բայց մոռանում է հաց բրդել մեջը: Թուրքը բարկանում և ամանը կերակուրով շարտում է հայի գլխին, և ամանը մի մեծ վերք է բացում նրա ճակատի վրա: Հայը ոստիկան է կանչում ու բռնել տալիս թուրքին: Ոստիկանական վարչությունը բարվոր է համարում հային էլ թուրքի հետ բանտարկել մինչև դատի օրը, որը տեղի կունենա մեկ ամսից հետո... Այս դատն էր, որ հեղինակը նկարագրել է հումորախառն ցավով:

Տիրող անիրավությունների, անարդարությունների հետևանքով հայը միշտ մեղավոր էր լինում, իսկ տաճիկը՝ անմեղ: Տաճիկներն ամեն ջանք գործ էին դնում հանցանքը հայերի վրա բարդելու համար և նրանց միշտ հաջողվում էր թե դատապարտությունից ազատվել և թե հային միշտ հանցավոր հանել ու բանտարկության, սուղանքների ենթարկել...

Հեղինակը ներկայացնում է մի ուրիշ դատ՝ որպես ականատես: Այս անգամ դատը տեղի էր ունենում մի պարսիկ բանվորի և տաճիկ գործարանատիրոջ միջև: Բողոքը ներկայացնում էր պարսիկ բանվորն իր տիրոջ դեմ. աշխատանքի ժամին գործարանատիրոջ պատճառով պարսիկ բանվորի թևն ընկել էր մեքենայի տակ ու մինչև արմունկը ջախջախվել: Հիվանդանոցում ապաքինվելուց հետո հաշմանդամ դարձած բանվորն էֆենդիից իր աշխատավարձն էր խնդրում, որպեսզի հայրենիք վերադառնա: Գործարանատիրը ծաղրում է նրան ու հրամայում ծառաներին, որ պարսիկ բանվորին պատշգամբից ծովը նետեն, որպեսզի հաճույք պատճառեն իր կնոջը: Հրաշքով բանվորը փրկվում է խեղդվելուց ու դատարանում պատմում կատարվածը: Դատավորի մի քանի անտեղի հարցերից հետո գործարանատիրը բոլորովին արդարացվում է, իսկ վկան իր սուտ վկայության համար մեկ ամսով բանտարկվում է:

«Արդար դատաստան» գրույցում հեղինակը մերկացրել է թուրքական անբարոյական «արդարադատությունը»: Վրթ. Փափագյանը ժամանակի անարդար օրենքները պատկերելիս դիմել է արևելյան գրույցներին: Դրա լավագույն օրինակը «Զգայնաչափ» գրույցն է: Հեղինակն այստեղ առաջ է քաշել մարդկային առաքինությունների հարցը: Հնարավոր էր արդյոք որոշել մարդու կողմից սահմանված մի շարք հասարակական և բարոյական նորմաների իրականացման չափը և ինչպես դա անել:

Զրույցը պատմում է, թե ինչպես Ծեր Բրահմինը մի երեկո տուն վերադառնալիս նկատում է երկու մանուկների, որոնք կուչ էին եկել մի վրանաձև շորի տակ: Մանուկներից մեկը՝ փոքրիկ աղջիկը, քաղցած էր, հաց էր ուզում, իսկ մյուսը՝ տղան, մխիթարում ու հուսադրում էր նրան, ասելով, որ շուտով մայրը հաց կբերի: Ծուռով գալիս է մայրը, նրանց հաց բերում: Աղջիկը ուտում է իր բաժինը ամբողջությամբ, իսկ տղան՝ իր չափաբաժնի մի մասը թաքցնում է անկյունում:

Բրահմինին հետաքրքրում է տղայի այդ վարմունքը և հաջորդ օրը նորից է գալիս տեսնելու, թե տղան արդյոք պակաս քաղցած էր աղջկանից: Եւ նա տեսնում է, որ աղջիկը քաղցած լաց էր լինում, իսկ տղան մխիթարում էր նրան: Քրոջը հանգստացնելու համար տղան հանում է երեկվա

պահած հացը ու տալիս նրան, բայց վերջինս չի վերցնում, ձգում է գետնին, ասելով, որ եղբոր հացը չի ուզում:

Անսպասելիորեն ընդհատվում է գրույցի սովորական ընթացքը: Գրողն այլևս չի պատմում երեխաների հետագա ճակատագրի մասին, այլ առաջ է քաշում մի կարևոր հանգամանք. այն ինչ ուժ էր, որ թշվառ երեխաների մեջ հաղթանակ տարավ կենսաբանական բռնակալի՝ քաղցի նկատմամբ: Դա առաքինության ուժն է, որ ծնվում է զգացմունքներից:

Տեսնելով այս ամենը, Բրահմինը մտածում է առաքինության մասին: «Մտածեց ու գտավ, որ առաքինությունը ծնում է զգացմունքներից: Հետո էլ մտածեց, թե արդյոք չէր կարելի կշռել մարդկային զգացմունքների աստիճանը մի գործիքով, ինչպես որ չափվում է տաքության աստիճանը»⁶:

Ու որոշում է ստեղծել մի զգայնաչափ. վերցնում է որբի արտասուքից մի քանի կաթիլ, լցնում մի ապակյա խողովակի մեջ ու գնում դեպի վրանը: Խողովակը դնում է տղայի սրտի վրա և եռման ջերմաստիճանը խողովակի վրա նշանակում 100 թվով: Այնուհետև գտնում է մի խորթ մայր և նրա՝ դեպի իր խորթ որդին ունեցած զգացմունքը չափելով նշանակում գրո: Բայց անհրաժեշտ էր գտնել արտասուքի սառնցման կետը: Այդ նպատակով Բրահմինը չափում է ամենախիստ չարագործների զգացմունքը, սակայն ոչ մի դեպքում արտասուքը չի սառչում: Գալիս է այն եզրակացության, որ երևի բնության մեջ արտասուքի սառնցման աստիճան գոյություն չունի ու դադարում է իր հետազոտությունը:

Այստեղ գրողն ավարտում է գրույցի երկրորդ տարբը: Սկսվում է իմաստության մակաժողովուրդ:

Լսելով զգայնաչափի մասին, բոլորը գալիս են Բրահմինի մոտ՝ իմանալու իրենց զգացմունքի աստիճանը: Հայտնվում է մի կին, որն իր ամբողջ կյանքն անց էր կացրել եկեղեցուն ծառայելով, և ոչ ոք չէր կասկածում նրա առաքինության վրա: Նա ուզում էր իր բարձր առաքինությունը փայլեցնել ամբոխի առջև: Եւ երբ հպարտությամբ մոտենում է գործիքին, արտասուքը վայրկենապես իջնում է և... սառչում: Բրահմինը գտնում է իր ուզածը և անմիջապես կողքին արձանագրում սույն խոսքերը. «Առաքինությունը վատթարության աստիճանի»⁷:

Կինը կատաղում է և հաջորդ օրը բարեպաշտները փշրում են զգայնաչափը: «Եւ հենց այդ օրվանից է, որ այլևս չկա մի կշիռ մարդկային առաքինությունների և զգացմունքների համար...»⁸:

Հետաքրքիր է եկեղեցական կնոջ կերպարը. նա ամբողջովին նվիրվել էր եկեղեցուն, չունեց իր անձնական հոգսերը, հրաժարվել էր անհատական շահի անբարոյականացնող սկզբունքներից, գուրկ էր մարդկային հոգսերից: Նրա բարոյականությունն անբարոյական էր:

Քանի որ ամենուրեք տիրապետում էր լիակատար կեղծիք, անարդարություն, ապա զգայնաչափ երկար գոյություն ունենալ չէր կարող: Մարդիկ, որոնք իրենց առաքինի էին համարում, իրականում այդպես չէին:

Փափագյանը ցույց է տալիս, թե արդիական խնդիրներ արժարժելու համար ինչպիսի հնարավորություններ է պարունակում բանահյուսական ժանրը:

Գրողի գրույցների շարքն իրենից ներկայացնում է սոցիալական տրամադրությունների մի յուրահատուկ ժամանակաչափ: Յուրաքանչյուր հաջորդ երկի մեջ երևան է գալիս մի նոր հատկանիշ, և դրանց ամբողջությունը տեսանելի է դարձնում անդարձորեն դեպի վեր ընթացող ըմբոստ գիտակցության շրջափուլերը:

Հետաքրքիր է Փափագյանի «Մեծ փականք» այլաբանական գրույցը, որը հեղինակը լսել է մի պարսիկ պատմիչից:

Ձրույցը սկսվում է խորիմաստ և հետաքրքիր աֆորիզմով. «Ցանկալի առարկան նմանում է շիրմի բաց՝ բայց դռան վրա մեծ փականք...»⁹: Ինչ միտք էր արտահայտում այս աֆորիզմը: Ու պարսիկ պատմիչը պատմում է հետևյալը. նկարիչ Մանեն մեռնելուց առաջ ցանկանում էր մի լավ բան նկարել, հետո մեռնել: Ուզում էր գտնել մի նոր, ցանկալի տարօրինակ նկարի նյութ: Դրա համար նա պրպտում էր ամեն մի խուլ անկյուն: Բայց նրա համար դժվար էր գտնել մի առարկա, որ լիներ տարօրինակ և գրգռեր նրա ցանկությունը: Մի օր էլ նա գերեզման է մտնում ու տեսնում մի բարձր պատերով շիրիմ, որի դուռը փակված էր մի անհազին խոշորությամբ կողպեքով, դռան ճակատին էլ արաբական տառերով գրված էր հետևյալը. «Մտի՛ր այստեղ, եթե կարող ես, և կգտնես ինչ որ փնտրում ես»: Նկարիչ Մանեն շատ է զարմանում. միթե գերեզմանի մեջ մարդ կարող էր գտնել իր փնտրածը. ինչու փակել շիրմի դուռը մի այնպիսի մեծությամբ կողպեքով, որ միայն դնում են բանտերի կամ գանձարանների վրա:

«Մտնենք, - մտածեց նա, - գուցե մի նոր բան կա իսկապես թաքնված այդ մեծ կողպեքի նստում. թշվառություն կամ գերություն արդյոք, թե՛ գանձ կամ իշխանություն...»¹⁰:

Մեծ դժվարությամբ փշրում է կողպեքը, բացում շիրմի դուռը ու ներս մտնում: Նորից երևում է գարմանալի տնսարան. շիրմին ուներ միայն երեք պատ, ետևի պատը լիովին շինված չէր: Ինչու, ուրեմն, շինել մի մեծ շենք միայն երեք պատով և ապա դռան վրա էլ մի մեծ փականք կանգնեցնել:

Այստեղ էլ նկարիչը գտնում է իր փնտրածը: Այդ պահին անսպասելիորեն նա տեսնում է պատի վրա քանդակված սույն երեք տողերը.

«Ամեն ինչ նոր է աշխարհիս վրա, սակայն ոչինչ նոր չէ:

Ձեռք բերելու դժվարությունը առարկան ցանկալի է դարձնում:

Մի անգամ ձեռք բերված՝ նա դառնում է սովորական»¹¹:

Այս տողերը խիստ ազդում են Մանեի վրա: Գտել էր փնտրածը, բայց և չէր գտել, որովհետև եթե գտել էր, ապա դա իր փնտրածը չէր: Ուրեմն նա փնտրում էր մի այնպիսի բան, որ չափիսի գտնվեր:

Այնուհետև նկարիչ Մանեն գնում է տուն, նկարում շիրմը՝ երեք պատով, ետևի բացվածքով, նկարում նաև դուռը և նրա վրա դնում խոշոր երկաթյա փականքը ու գրում հետևյալ տողերը. «Ցանկալի առարկան նմանում է շիրմին բաց՝ բայց դռան վրա մեծ փականք»:

Ձրույցն իր մեջ պարունակում է կյանքի առեղծվածը, որ երբեք հնարավոր չէ ամբողջությամբ բացահայտել:

Շարունակելով հարստացնել գրույցների շարքը, Փափագյանը պատկերային նոր համադրումների մեջ ամենից առաջ փորձել է պատասխանել այն հարցերին, թե՛ ինչու այլանդակվեց հասարակական կազմակերպությունը, ինչ փոխհարաբերությունների մեջ են տիրապետող բարոյանորմերը ազնվության ջանքերի և ճշմարտության հետ, ինչպիսին պետք է լինեն ստրուկների պահվածքը կեղեքման նկատմամբ և այլն: Այս հարցերին պատասխանելով՝ հեղինակը ստեղծել է այլաբանական մի ինքնատիպ խորհրդանիշ: Այս առումով աչքի է ընկնում նրա «Լյոր աստվածներ» այլաբանական գրույցը, որտեղ պատկերել է այն հեռավոր ժամանակները, երբ մարդկությունն իբրև փոխանակության միջոց սկսեց օգտագործել ոսկու մանրացված կտորները: Հանդես գալով իբրև հասարակական աշխատանքով ձեռք բերված ապրանքին համարժեք՝ ոսկին դարձել էր կուտակման միջոց: Ահա այս ընդհանուր իմաստն է իր մեջ ներառում «Լյոր աստվածներ» այլաբանական գրույցը:

«Լյոր աստվածներին» երկու գլխավոր խորհրդանիշները՝ սատանան և ոսկի հորթն են, որ մարդկությանը հայտնի են դեռևս ավետարանական վաղեմությունից և կերպավորվում են մարդու մեջ նստած չար ոգին ու սեփականատիրական ազահ կիրքը:

«Ոսկյա հորթը» խորհրդանշում է դրամական հարաբերությունները, որոնց շնորհիվ մարդկության մեջ սերմանվում է չարությունը, բռնությունն ու անարդարությունը:

«Դժոխքի» կառավարիչներն իրենցից ներկայացնում են բռնակալությունը, որոնք ամեն միջոց գործ են դնում ժողովրդին ստրկացնելու համար: «Ոսկյա հորթը» դրամի փոխելով՝ բռնակալներն այդ դրամը ցրում են ժողովրդի մեջ տասից մեկի գրպանը, որպեսզի խախտվի ժողովրդի ներքին միասնությունը՝ հիմք դնելով անարդարությանը:

Այսպիսով, «Լյոր աստվածներ» գրույցի մեջ Փափագյանը բռնության և չարիքի նախահիմքերը պեղելիս մարդկային փոխհարաբերությունների «չար ոգի» է դիտում տնտեսական գործոնը՝ աշխատանքի արդյունքի անհավասար բաշխումը: Եվ պատահական չէ, որ գրողն իր այս այլաբանական գրույցի համար որպես նախաբան ընտրել է Ֆաուստի հետևյալ տողերը. «Ոսկյա հորթը միշտ կանգուն է և խնկում է նրա գործությունը»:

1899թ. «Թատրոն» հանդեսի 2-րդ համարում տպագրվել է Փափագյանի «Պայտարի հոգին» պատմվածքը, որտեղ հեղինակը պատմում է, թե՛ ինչպես Հիսուս Քրիստոս էշով Երուսաղեմ գնալիս ճանապարհին էշը կորցնում է մի պայտը ու կաղում: Այդ պահին, որտեղից որ է, ժողովրդի միջից դուրս է գալիս մի պայտար և մի քանի րոպեում պայտում Հիսուսի գրաստը: Մեծ Փրկիչը ժպտում է գոհունակությամբ և պայտարից հարցնում, թե՛ ինչ կկամենա իրենից այդ բարի գործի համար: Պայտարը Քրիստոսին ասում է. «Տե՛ր, ես մի խեղճ պայտար եմ, մի տոպրակ, մի աթոռ ունիմ և տանս կողքին էլ մի ընկուզենի: Ցանկանում եմ, որ աթոռիս վրա նստողը, տոպրակիս մեջ մտնողը և ընկուզենու վրա ելնողը՝ չկարողանան պոկ գալ, դուրս գալ և իջնել, մինչև որ անունովդ չիրամայնեմ ես նրանց»¹²:

Հիսուսը խոստանում է կատարել պայտարի ցանկությունը և շարունակում է իր ճանապարհը:

Ապրում է պայտարը երկար տարիներ իր խրճիթում: Մենակ էր ու բավարարված էր իր ունեցածով և շատ էր սիրում կյանքը:

Օրերից մի օր պայտարին այցելության է գալիս հոգևառ հրեշտակը և պայտարին ասում, որ վերջին անգամ աղոթի, եկել է նրա հոգին տանելու: Բայց պայտարը դեռ ապրել էր ուզում, դեռ ուզում էր բնությունն ու հովը, լեռներն ու դաշտերը, տեսնել ու վայելել այդ հաճույքը:

Տեսնելով, որ հոգևառ հրեշտակը չի հրաժարվում իր մտքից և անպայման ուզում է տանել պայտարի հոգին, պայտարն անմիջապես մտաբերում է Հիսուսի տված շնորհները և օգտվում նրանից. «Լավ ուրեմն, հրեշ, - ասաց նա քաղաքավարությամբ, - հրամն, քիչ նստիր այս աթոռի վրա, մինչև ես աղոթքս կատարեմ»¹³:

Քանի որ հրեշտակը հոգնած էր, անմիջապես նստում է աթոռին: Զգում է, որ բռնվել է: Ճիգ է գործում ելնելու, բայց նրա ջանքերն ապարդյուն են անցնում: Աղաչում, պաղատում է պայտարին և, վերջ ի վերջո, պայտարի հոգին թողնելու գնով ազատվում ու շտապում երկինք:

Հոգևառ հրեշտակը աստծուն պատմում է պայտարի արածը: Աստված ծիծաղում է, զվարճանում և հրեշտակներին ասում, որ գնան և խորամանկությամբ, առանց ուժ գործադրելու առնեն պայտարի հոգին:

Օրերից մի օր պայտարին հայտնվում են մի խումբ չար ոգիներ: Պայտարն անմիջապես հասկանում է, որ իր հոգին առնելու են եկել և աղերսալից կերպարանք ստանալով դիմավորում է չար ոգիներին: Ոգիները խրճիթ են լցվում ու պահանջում պայտարի հոգին:

Պայտարը նորից խորամանկության է դիմում. չար ոգիներին ասում է, թե ինչով կարող են հաստատել, որ իրենք ուղարկված են աստծո կողմից ու պայման է կապում նրանց հետ. «Ես մի տոպրակ ունիմ, ահա, տեսնեք, եթե բոլորդ կարողացաք այնքան փոքրանալ, որ առանց ձեռք, ոտք կամ գլուխ դուրս թողնելու տեղավորվեք նրա մեջ, դա ինձ համար ապացույց կլինի, որ աստված է ձեզ ուղարկել. ապա թե ոչ՝ կորեք գնացեք և աստծու անունը թող ոչնչացնե՞ք ձեզ...»¹⁴:

Եւ չար ոգիները, ցանկանալով պայտարին ցույց տալ իրենց մեծ ուժը, փոքրանում ու տեղավորվում են տոպրակի մեջ այնպես, որ ոչ մի ձեռք, ոտք կամ գլուխ դուրս չի մնում: Պայտարն ուրախանում է. առնում է մի մեծ մուրձ ու սկսում ջարդել նրանց կողերն այնքան, որ դևերը ճշում, խնդրում են պայտարին, որ նրանց դուրս թողնի, որ այլևս չեն ցանկանում պայտարի հոգին: Պայտարն ազատում է նրանց: Հիսուսի շնորհիվ այս անգամ ևս պայտարը ազատվում է փորձությունից և օրհնում է այն րոպեն, երբ պայտել էր Փրկչի էջը:

Երկար ժամանակ պայտարն ապրում էր իր խաղաղ կյանքով, ոչ ոք չէր անհանգստացնում նրան, ոչ մեկը սիրտ չէր անում տանելու պայտարի հոգին:

Մի օր էլ դժոխքի մի ամենախորունկ զավակ աստծուց հրաման է խնդրում առնելու պայտարի հոգին: Եւ հրեշտակի կերպարանք է առնում ու իջնում պայտարի մոտ: Խորամանկ եկվորը ոչ աթոռին էր մոտ գնում, ոչ տոպրակին և ոչ էլ ուզում էր խրճիթը մտնել, պարզապես դրսից էր ուզում պայտարի հոգին: Պայտարը քիչ խորհում է և, դիմելով խորամանկության, հուսաբեկ ասում է. «Էլ ինչ արած, պարոն հրեշտակ, քեզ խաբել չի լինում. հոգիս առ տար: Բայց թույլ տուր ինձ մի վերջին անգամ աղոթել: Հնոտ, գիտես, ես շատ վախկոտ եմ, թույլ տուր ինձ չոքել այս ընկուզենու տակ և երբ ես վերջին խոսքն էլ ասեմ, ելիր ծառի վրա և այնտեղից հոգիս առ ու տար»¹⁵:

Եւ երբ պայտարը սկսում է լացել, խորամանկ ոգին կարծում է, թե հաղթել է: Ելնում է ընկուզենու վրա նստում և սպասում պայտարին: Զգում է, որ չի կարողանում պոկ գալ ծառից, որ ինքը ևս մնացածների նման խաբվել է: «Ահա այդպես... - հպարտացավ պայտարը, - հանուն Հիսուսի գնա և պատմիր ընկերներիդ, որ հեշտ բան չէ Քրիստոսի պայտարի հոգին հանելը...»¹⁶:

Ելնում է ոգին ու հեռանում: Իսկ պայտարը հպարտ, այլևս ապահով կյանք է սկսում վարել ու ծիծաղել բոլոր հոգևառների վրա...

Բայց վերջիվերջո պայտարը հոգին տալիս ու մեռնում է: Բայց ով էր պայտարի հոգևառը: Ժողովրդական գրույցն ասում է, որ պայտարը երբ ամուսնանում է, կնոջ հրամանով ոչնչացնում է բոլոր հնացած իրերը, այդ թվում՝ տոպրակն ու աթոռը, իսկ ընկուզենին կտրում է... Եւ կինը պայտարին այնպիսի դրության մեջ է գցում, որ պայտարն է աստծուց խնդրում իր հոգին առնի...

Եւ այսպես, պայտարը, մի փոքր արդար գործ կատարելով, կերտում է իր ճակատագիրը՝ բազմիցս անգամ փրկվելով մահից: Բայց չէ որ այդ գործը նա կատարել է Մեծն Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի համար, որը շատ էր անհրաժեշտ:

Ինչպես տեսնում ենք, Փափագյանի գրույցներում բազմիմաստ են այլաբանական պատկերները, որոնք գրույցներն ընդհանրացնող մեծ ուժի առավատչյալ են:

Ուշագրավ է Վրթ. Փափագյանի «Նիրվանա» պատմվածքը, որն իր ներքին սյուժետային հյուսվածքով նման է «Մերկ դերվիշը» պատմվածքին: Երկու դեպքում էլ բուն նյութը արևելյան թափառաշրջիկ թշվառների կյանքն է, որը Փափագյանի ստեղծագործության մեջ ուշագրավ ներքին զարգացում է ապրել: Եւ «Մերկ դերվիշը», և «Նիրվանան» նպատակ ունեն պատկերել, թե մինչև որ աստիճան կարող է ընկնել մարդը հասարակական դաժան փոխհարաբերությունների պայմաններում: Սեփական և շրջապատող կյանքի անողորմ ճակատագիրը որոշ մարդկանց մեջ սպանել է կյանքի սերը, նրանք ունեն միայն մեկ ձգտում. մոռանալ կարծրացյալ-անբեկանելի անարդարությունները, աֆիոնի մոգական ուժով տեղափոխվել պերճ երազների աշխարհը և այնտեղ «վայելել» կյանքի հաճույքները:

«Նիրվանա» պատմվածքը Փափագյանը գրել է 1901թ.: Այս պատմվածքի համար ստեղծագործական ազդակ է եղել Շ. Բողլերի բանաստեղծությունների ֆրանսիական հրատարակության առաջաբանը, որի հեղինակն էր Թեոֆիլ Գոթյեն: Այդ առաջաբանում Թ. Գոթյեն մեջբերել է սեփական ականջով լսած Դերվիշի ներքողը աֆիոնին, որը «մխիթարում է ճնշված արդարին»:

«Նիրվանա» պատմվածքում հեղինակը նկարագրել է ժամանակի անարդարություններն ու բռնությունները, որոնց միշտ զոհ են գնացել խեղճներն ու թշվառները, դերվիշները: Եւ վերջիններս այդ անօրեն բարքերը մոռանալու համար իրենց նվիրում են աֆիոն ծխելուն:

Վրթ. Փափագյանի գրույցների միջև գոյություն ունի մի ներքին դաշնություն, գեղարվեստական հարաբերակցությունների զարմանալի օրինաչափություն: Ստեղծագործական յուրաքանչյուր առանձին երկունքի մեջ ստեղծված է «արտամարդկային» իրականությունը, որն ունի իր խստիվ օրենքները, որտեղ «գործում են» բարոյանորմեր ու հասկացություններ:

Փափագյանի այլաբանական գրույցներում ցայտուն կերպով արտահայտված են հեղինակի բուռն ցասումն ու ատելությունը տիրապետող քաղաքական կարգերի նկատմամբ: «Արդարություն» կոչվածը գոյություն չունի, այն «կորսված» էր, և հասարակության տարբեր խավեր այն գտնում էին իրենց համապատասխան միջոցներով: Այդ է վկայում Փափագյանի «Կորսված արդարություն» այլաբանական գրույցը, որի մեջ դիմակագերծ էր արվել բուրժուական հասարակության կարծեցյալ ազատությունը:

«Կորսված արդարություն» գրույցի մեջ հեղինակը նկարագրում է, թե ինչպես է անհետանում Արդարությունը, որը հաճախ էր պատահում, քանի որ խուսափում էր իրեն ծաղրող, լկող անձերից: Ամեն անգամ հաջողվում էր գտնել այն, բայց այս անգամ մարդիկ անկարող եղան գտնելու նրան:

Այս այլաբանական գրույցում «գործող անձը» Արդարությունն է, որն ինքն է թողնում-հեռանում մարդկանցից, քանի որ հարգանք չկար իր նկատմամբ: Ինչպես կլինի, որ Արդարությունը կրկին վերադառնա իրենից երես թեքած մարդկանց մեջ: Ով կվերադարձնի նրան:

Առանց արդարության դժվար է ապրել, մանավանդ որ նրա բացակայության ժամանակ բազմանում են առանց այն էլ մեծ տարածում գտած անարդարությունները՝ կեղծավորություն, անիրավություն, խաբեություն, արյունահեղություն և այլն:

Եւ ահա Արդարությունը փնտրելու է ելնում նախ մի պատերազմիկ-ազնվական, որն առաջ է ընթանում ոտնակոխ անելով գյուղ ու քաղաք, արյուն սփռելով դաշտ ու ձոր: Այնուհետև Արդարությունը որոնելու ճանապարհ է ընկնում մի հարուստ մեծատուն, որը փորձում է Արդարությունը գտնել ոսկով: Եւ Փափագյանը այսպես է գրել. «Բռնեցքն ու ոսկին գնացին Արդարությունը որոնելու... Եւ դեռ գնում են»¹⁷: Սակայն «բռնեցքն ու ոսկին» ի գործու չեն արդարություն ստեղծել, որովհետև նրանց անհրաժեշտ է միայն Արդարության դիմակը:

Բայց ով է այն ներքող անձը, որ խեղճ ու կրակ, ցնցոտիներ հագած փորձում է գնալ Արդարությունը որոնելու: Այդ մարդը թշվառն էր, որը ոչ ոսկի ուներ և ոչ էլ զենք, բայց ինչով կարող էր Արդարություն որոնել: Թշվառն իր ձեռքին ուներ մի չնչին սրվակ՝ «վցված որբից մի արցունք, ընկածից մի հառաչ և գործավորից մի դառը քրտինք»: Միայն թշվառն է ճշմարտապես գտում Արդարության կարիքը:

Երկար թափառում է թշվառը՝ սրտի վրա սեղմած ունենալով վշտի արցունքներով լի սրվակը, բայց Արդարությունը չկա ու չկա: Թափառելուց հոգնում է և նստում մի ժայռի վրա հանգստանալու: Թշվառը բարկացած ծոցից հանում է սրվակը ու խփում ժայռին: Սրվակը փշրվում է, լսվում է մի ահեղ որոտում և երևում է մի ահեղ հսկա: Թշվառը վախենալով հարցնում է նրա ով

լինելը: Պատասխանը լինում է հետևյալը. «Ես, - գոչեց հսկան, - ես Բողոքն եմ, որ ծնա այդ թափած արցունքներից և որ պիտի աշխարհի բերեմ անհայտացած Արդարությունը... Նայիր...»¹⁸: Հնդկում թշվառին նրկում է թաքնված Արդարությունը՝ խորունկ տխուր հայացքով, առանց կշեռքի, առանց մեծ սրի, իսկ հնում Արդարությունը հանդես էր գալիս որպես մի դիցուհի՝ աչքերը կապած, մի ձեռքին սուր և մյուսին՝ կշեռք:

Բողոքը խնդրում է Արդարությանը վերադառնալ. «Եկ, Արդարություն, - կանչեց Բողոքը, - ես ծնվել եմ, և իմ ձայնը թող քեզ համար կշեռք ու սուր դառնա, եկ Արդարություն...»¹⁹: Բայց Արդարությունը նայում է Բողոքին և թշվառին ու ասում. «Դեռ ոչ... դեռ դու փոքր ես. գնա, քայլիր, կուտակիր արցունք, կուտակիր վշտեր, մեծացիր որպես օվկիան, կատաղիր որպես հեղեղատ և այն ժամանակ միայն ես կգամ իմ սրով և իմ կշեռքով»²⁰: Եւ նորից է անհետանում Արդարությունը: Թշվառը ևս չի կարողանում ետ բերել Արդարությունը: «Այդ օրվանից ահա՝ պատերազմիկ գորեղն արյունի մեջն է որոնում Արդարությունը, հարուստը՝ ոսկու, և թշվառը, նստած իր վշտերի մոտ, արցունքներով մեծացնում է Բողոքին, որ նա վերակոչեւ աշխարհում՝ կորսված Արդարությունը...»²¹:

Բարձր և երանելի կյանքը մի կորցրած արդարություն է, որ գտնել կարող է միայն թշվառը, զրկվածը, այսինքն նա, ով ստեղծել է աշխարհի բարիքները:

Վշտերն ու արցունքներն իզուր չեն անցնի, դրանք դեռևս որակական վճռորոշ ուժ չեն դարձել, սակայն մոտ է այն պահը, երբ կծնվի ամենափրկիչ Բողոքը, օվկիանի պես անսահմանի և հեղեղատի նման կատաղի, որպեսզի վերացնի սանձարձակությունների վրա բարձրացող հին աշխարհը և «վկայակոչեւ... կորսված Արդարությունը»:

Իսկ շատ դեպքերում արդարություն փնտրում են բոլորը, բայց դա գտնում են յուրովի:

Ինչպես շատ գրողներ, այնպես էլ Վրթ. Փափագյանը բարձր է գնահատել հասարակ մարդու ազնիվ ու արդար աշխատանքը:

1903թ. Փափագյանը գրել է «Փայտն սուրը» պատմվածքը, որում նկարագրել է մի խեղճ հնակարկատի, որն իր օրվա հացը վաստակում էր արդար աշխատանքով, իր հալալ քրտինքով: Պատմվածքն ունի բովանդակալից պյուժե, որը վերցված է պարսկական կյանքից: Ընդհանրապես պարսից արքաները սովորություն ունեին գիշերով դուրս գալ ժողովրդի բազմության մեջ և անձամբ տեսնել նրանց կյանքը: Այդպես էր անում նաև Իրանի արքայից արքա Շահ-Աբասը: Մի երեկո մեծ արքան թափառական հագուստով մտնում է Սպահանի շուկան: Բոլոր խանութներն արդեն փակված էին: Շահ-Աբասը երկար ման է գալիս, զննում ամեն բան և նկատում, որ մի խանութում դեռ լույս կա:

Հնակարկատի խանութ էր: Արքան դառն ճեղքով նայում է ներս ու տեսնում, որ աղքատ հնակարկատն իր առջև դրած ունի մի սեղան, որի վրա ուտելիքն ու խմիչքը կրկնապատիկ գին ունեն, քան ամբողջ խանութի եղած-չեղածը: Շատ է զարմանում և ցանկանում է իմանալ այդ գաղտնիքը: Բայց ուտում է խանութի դուռը և դերվիշի պես սկսում երգել: Հնակարկատը սկզբում չի բացում դուռը, բայց հետո միտքը փոխում է ու բացում:

Շահը լուռ ներս է մտնում, նստում սեղանի առաջ և որոշում է իմանալ կերակուրի և խմիչքի որտեղից լինելը: Հնակարկատը չի ուզում պատասխանել նրա հարցին, բայց դերվիշը շատ է պնդում: Հնակարկատը պատասխանում է, որ իր ուտելիքն ու խմելիքը վաստակում է իր լավ գործի դիմաց: Դերվիշը նրան հարցնում է, թե ինչ կանի այն դեպքում, եթե շահը արգելի հնակարկատության գործը: Հնակարկատը պատասխանում է, որ ինքը երբեք քաղցած չի մնա, մի գործով կբաղվի...

Հաջորդ օրը Շահ-Աբասը հրաման է արձակում, որ ամեն տեղ արգելվի հնակարկատության արհեստը: Իսկ Շահի հրամանն օրենք էր ժողովրդի համար, ոչ ոք չէր կարող հակառակվել նրան:

Երբ մթնում է, Շահը նորից դերվիշի հագուստով գնում է շուկա՝ հնակարկատի մոտ, որտեղ նորից էտեսնում նույն ճոխ սեղանը ու զարմանում. որտեղից կլինեն ձեռք բերած այդ ուտելիքն ու խմելիքը, եթե երկրում արգելվել էր հնակարկատության գործը: Շահի մեծ հետաքրքրությանը արհեստագործ Ահմեդը տալիս է հետևյալ պատասխանը. «Շահը պատրաստվում է ամառանոց գնալ. դրա համար նրա ծառաներն այսօր փողոց ու բազար ընկած, որքան ջորի տեսնում էին, մտրակի առաջն արած պալատ էին տանում, որ շահի բեռները կրեն: Եթե ջորեպանը քիչ կաշառք էր տալիս, նրա ջորիներին չէին դիպչում: Ես էլ այդ տեսա. իսկույն ֆերրաշի մի նշան գտա, կպցրի գլխարկիս. հորիցս մի հին սուր էր մնացել՝ կապեցի կողքիցս, փողոցներն ընկա, ջորիներ գտա, շատ աղմկեցի, շատ սպառնացի, կաշառքներ արի, և այնքան միայն, որքան պետք էր իմ ճաշի համար... ինչ արած, լավ որկոր ունիմ»²²:

Աշխատավոր մարդու համար ոչ մի արգելք չի կարող հանդիսանալ, որ նա վաստակի իր մի կտորը հացը: Այս դեպքում արհեստագործը չի գրկվում իր ճոխ ուտելիքից, ինչքան էլ չար արքան խանգարի նրան:

Հաջորդ օրը Շահը հրամայում է, որ արգելեն ջորիներ հավաքելը: Եվ նորից դերվիշի հագուստով գնում է հնակարկատի խանութը, տեսնում սեղանին դրված ճոխ ուտելիքը: Շահը հարցնում է ուտելիքի որտեղից լինելը: Ահմեդն ասում է, որ ստիպված վաճառել է իր հոր սուրը, այսինքն՝ նրկաթը ծախել է, իսկ կոթը իբրև հիշատակ պահել, նրկաթի տեղը փայտ դրել: Շահը ծիծաղում է, ուտում, խմում ու գնում:

Մյուս օրը հրամայում է, որ իր մոտ բերեն բոլոր ֆերրաշներին կամ մի օր իսկ ֆերրաշություն արած մարդկանց, ընդ որում իրենց հագուստով ու սրերով:

Երեկոյան բոլորին հավաքում են Շահ-Աբասի մոտ: Վերջինս անմիջապես ճանաչում է Ահմեդին, որը եկել էր իր փայտե սրով: Եւ Շահը մտածում է նորից զվարճանալ: Խստությամբ նայում է բոլորին և Ահմեդին ասում, որ հանի սուրը և կտրի ընկերոջ գլուխը, քանի որ ընկերը հանգիստ չէր կանգնած:

Ահմեդը սարսափում է, սաստիկ գունատվում: Հոգեկան ծանր վիճակի մեջ է ընկնում, քանի որ արդար մարդ էր և չէր կարող սպանել ազնիվ, անմեղ մարդու: Շահին խնդրում է, որ իրեն չհրամայի անմեղ արյուն թափելու: Բայց ով կհամարձակվեր չկատարել շահի հրամանը. հակառակ դեպքում մեկ վայրկյանում հրաժեշտ կտար իր կյանքին:

Այդ հրամանը տալով Շահը ուզում էր տեսնել հնակարկատի շփոթությունը և զվարճանում է, որ կարողանում է գոնե մեկ անգամ Ահմեդին անհարմար և շփոթության մեջ գցել: Բայց նա հաշվի չէր առել արհեստագործի ճարպկությունը:

Երբ Շահը նորից է ստիպում Ահմեդին, վերջինս գտնում է հնարքը. աչքերը նրկինք է բարձրացնում, աղոթում ու բարձրաձայն գոչում. «Ով դու արդար աստված և մեծ մարգարե, տեսնում եք, որ այստեղ ստիպում են ինձ անիրավ բան անելու. եթե ընկերս անմեղ է, թող սուրս պատյանումս իսկույն փայտ կտրի»²³:

Եւ երբ մեծ ուժով սուրը հանում է պատյանից, բոլորը ապշում են, որովհետև սուրը փայտ էր դարձել:

Արքան իսկույն հրամայում է Ահմեդին դատավորի պաշտոն տալ ու ասում նրան. «Ահմեդ, այժմ դատավոր ես. հիշիր փայտե սուրդ և ամեն անգամ, երբ կասկածի մեջ ընկնես հանցավորի համար, աղոթիր աստծուն այնպես, ինչպես այժմ աղոթեցիր...»²⁴:

Ասում են, որ մինչև իր խոր ծերությունը Ահմեդն իր վրա ուներ միայն փայտե սուրը և այն նրբեք նրկաթի չի փոխել: Եւ երբ մեռնում է, փայտե սուրը նրա հետ գերեզման են դնում, և մի պարսիկ բանաստեղծ նրա շիրիմի վրա արձանագրում է սույն տողերը.

«Հանգիստ քեզ, արդար, բարի դատավոր.

Թեև մեծ որկոր ունեիր, խելք հնակարկատի,

Բայց կշիռդ հավասար էր և սուրդ փայտի...»²⁵:

Խնդհ հնակարկատ էր Ահմեդը, գործունյա մարդ, երբեք ձեռք չէր պարզել, դիմացել էր Շահի ցանկացած քնահաճույքին: Նա այնքան ազնիվ ու ճարպիկ է գտնվում, որ Շահի հրամանով նույնիսկ դատավոր է նշանակվում և իր փայտե սրով բարի ու արդար գործեր կատարում... Փաստորեն, աղքատ ու հասարակ մարդը կարողանում է իր սրամտությամբ և հնարագիտությամբ հաղթել Շահին:

Ամեն տեղ տեսնելով կեղծիք, անարդարություն, Փափազյանը մերկացրել է այն: Եւ քանի որ տիրապետողը սուտն էր, կեղծիքը, ապա արդարությունը տեղ չունեի, որն էլ կերտում էր անմեղների ճակատագիրը:

5-րդ դարի պատմիչ, խոշոր մտածող-փիլիսոփա Եզնիկ Կոզբացին իր «Եղծ աղանդոց» գրքում մարդու ճակատագրի մասին այսպես է գրել. «Օ տկար ճակատագիր և անգոր վճիռ, որ գրողներն ու ավագակներն էլ կարողանում են խախտել, երբ հարձակվելով՝ մարդուն կողոպտում ու սպանում են: Եւ եթե դեպքերը պիտի կատարվեն ճակատագրի ինչ-որ սահմանումով, ապա ոչ թագավորները պիտի մահվան հրաման տան, ոչ էլ դատավորները պիտի տանջեն ու սպանեն մարդասպանին: Այնինչ նրանք պատիժ տալով հայտնի են դարձնում, որ հանցավորների հանցանքները ոչ թե ճակատագրի ինչ-որ սահմանումով, այլ չարագործ բռնությամբ են լինում»²⁶:

Իր այլաբանական ստեղծագործություններով Վրթ. Փափազյանն իրեն դրսևորել է որպես մեծ հումանիստ: Նրա գրական ժառանգությունն ազգային սահմաններից գնում է դեպի համամարդկային տեսադաշտ:

Ծանոթագրություններ

1. Փափազյան Վրթանես, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1959, էջ 631:
2. Նույն տեղում, էջ 479:
3. Փափազյան Վրթանես, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1958, էջ 228:
4. Հայկական ժողովրդական հեքիաթներ, հ. 10, Եր., 1967, էջ 522:
5. Նույն տեղում:
6. Փափազյան Վրթանես, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1958, էջ 346:
7. Նույն տեղում, էջ 347:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, էջ 348:
10. Նույն տեղում, էջ 350:
11. Նույն տեղում, էջ 351:
12. Փափազյան Վրթանես, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1958, էջ 242:
13. Նույն տեղում, էջ 243:
14. Նույն տեղում, էջ 245:
15. Նույն տեղում, էջ 247:
16. Նույն տեղում:
17. Նույն տեղում, էջ 329:
18. Նույն տեղում, էջ 330:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում, էջ 331:
21. Նույն տեղում:
22. Նույն տեղում, էջ 335-36:
23. Նույն տեղում, էջ 338:
24. Նույն տեղում:
25. Նույն տեղում:
26. Եզնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց, Եր., 1970, էջ 109:

Резюме

В этой статье обсуждаются и оцениваются аллегорические рассказы одного из известных представителей армянской классической литературы Вртанеса Папазяна, в которых автор обсуждал проблемы человеческой судьбы и правосудия и антиармянскую политику Турции в 19-ом веке.

Конкретно были обсуждены такие произведения автора, как “Справедливое правосудие”, “Յգայնաժափ”, “Большой запрет”, “Круглые боги”, “Душа пайтара”, “Нирвана”, “Потерянная справедливость”, “Деревянный меч”.

Упоминается, что в своих аллегорических рассказах Вртанес Папазян описывал тяжелое положение рабочих, окриковал зверскую политику Османской Турции в отношении армянского и других народов. Подчеркивается, что литературное наследие Врт. Папазяна не потеряло своей актуальности в воспитательной, художественной и познавательной сферах.